

Հավելված
«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության
ռեկտորի 2018 թվականի _____ N _____ հրամանի

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիայի գիտական խորհրդի 2018 թվականի
հունվարի 30 -ի նիստում (արձանագրություն N 1)

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում (այսուհետ՝ Ակադեմիա) սովորողի ակադեմիական շարժունության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1240-Ն որոշումը:

3. Սույն կարգի գործողությունը տարածվում է Ակադեմիայի վրա՝ անկախ ուսուցման ձևից, իրականացվող հիմնական կրթական ծրագրերից (մագիստրոս և հետազոտող) և մասնագիտություններից:

4. Ակադեմիական շարժունությունը ուսանելու, հետազոտություններ կատարելու կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակումն է:

5. Ըստ ուսման նպատակի կամ ժամանակահատվածի՝ սովորողների՝ մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով ակադեմիական շարժունությունը կարող է լինել

որոշակի ժամկետով (այսուհետ՝ շարժունություն) կամ հիմնական (այսուհետ՝ տեղափոխություն):

6. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են.

1) **ակադեմիական շարժունություն**՝ սովորողի՝ որոշակի ժամկետով ներպետական կամ օտարերկրյա հաստատություններում կրթական ծրագրի որոշակի հատվածի իրականացում,

2) **ակադեմիական տեղափոխություն**՝ սովորողի փոխադրումը մի հաստատությունից (ներառյալ՝ օտարերկրյա), մասնագիտությունից, ուսուցման ձևից մեկ այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա), մասնագիտություն, ուսուցման ձև:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

7. Սովորողի ակադեմիական շարժունությունն իրականացվում է ուղարկող և ընդունող հաստատությունների փոխադարձ համաձայնությամբ, ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակում կամ սովորողի նախաձեռնությամբ՝ հետևյալ նպատակներով.

1) կրկնակի աստիճանաշնորհմամբ (երկու ավարտական փաստաթղթի տրամադրմամբ),

2) համատեղ աստիճանաշնորհմամբ (մեկ ավարտական փաստաթղթի տրամադրմամբ),

3) ընտրված կրթական ծրագրի ուղղությամբ որոշակի կրեդիտներ կուտակելու և փոխանցելու:

8. Հավակնորդների ընտրությունը կատարվում է մրցութային կարգով՝ սովորողի ակադեմիական առաջադիմության հաշվառմամբ՝ ուղարկող և ընդունող հաստատությունների կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

9. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

10. Կրկնակի կամ համատեղ աստիճանաշնորհման պայմանները սահմանվում են հաստատությունների փոխադարձ համաձայնությամբ:

11. Ակադեմիական շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով սովորողի և

ուղարկող ու ընդունող հաստատությունների միջև կնքվում է եռակողմ համաձայնագիր, որում ներառվում են ուսումնառության կազմակերպական և ծրագրային հարցերը: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսանեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:

12. Այն դեպքում, երբ Ակադեմիան հանդես է գալիս որպես ուղարկող բուհ, եռակողմ համաձայնագիրը պետք է համաձայնեցվի նաև Ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտորի, համապատասխան ամբիոնի վարիչի և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի (ուսումնամեթոդական վարչություն/ասպիրանտուրայի բաժին) հետ:

13. Եռակողմ համաձայնագիրը պետք է բովանդակի՝

1) բուհերի կողմից համաձայնեցված և հաստատված առարկայական (մոդուլների) ցանկը, նախատեսված ակադեմիական ժամերը, կրեդիտների քանակը և գնահատման ձևերը,

2) ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները,

3) գնահատման տարբեր համակարգերի առկայության և կիրառման դեպքում գնահատականների ճանաչման և փոխանցման ձևերը,

4) ակադեմիական շարժունության համար նախատեսված ուսման վճարի չափը, եթե կա տվյալ հարցը կարգավորելու անհրաժեշտություն:

14. Ակադեմիան, որպես ուղարկող բուհ, պարտավորվում է իր սովորողներին տրամադրել հետևյալ փաստաթղթերը.

1) ակադեմիական տեղեկանք,

2) տեղեկություն Ակադեմիայում սովորողների գիտելիքների գնահատման գործող համակարգի վերաբերյալ,

3) առարկաների (մոդուլների) ուսումնական ծրագրերը, նկարագրերը (ընդունող բուհի հարցման դեպքում):

14.1. Ակադեմիայի ամբիոնների վարիչները և կրթական ծրագրերի ղեկավարները ուսանողին/ասպիրանտին արտասահմանյան երկրների բուհերում ուսանելու համար երաշխավորելու դեպքում պարտավոր են տեղյակ պահել Ակադեմիայի

համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը (ուսումնամեթոդական վարչություն/ասպիրանտուրայի բաժին) և միջազգային համագործակցության և արտաքին կապերի բաժնին:

14.2. Ակադեմիայի սովորողը պարտավոր է ընդունող բուհ մեկնելուց առաջ դիմում ներկայացնել Ակադեմիայի ռեկտորի անունով՝ տեղեկացնելով ընդունող բուհ տեղափոխվելու և ժամկետների վերաբերյալ:

15. Ակադեմիան, որպես ընդունող բուհ, պարտավոր է ուղարկող բուհից պահանջել հետևյալ փաստաթղթերը.

- 1) ակադեմիական տեղեկանք,
- 2) առարկաների (մոդուլների) նկարագիրը (անհրաժեշտության դեպքում),
- 3) լրացուցիչ տեղեկություն բուհի, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողի և այլնի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),
- 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ակադեմիայի կանոնակարգերով նախատեսված այլ փաստաթղթեր:

16. Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումից հետո Ակադեմիայի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը (ուսումնամեթոդական վարչություն/ասպիրանտուրայի բաժին) համաձայնագրի հիման վրա սովորողի անունով ներկայացնում է զեկուցագիր Ակադեմիայի ռեկտորի անունով: Ձեկուցագրի հիման վրա անձնակազմի կառավարման բաժնի կողմից պատրաստվում է հրաման՝ ակադեմիական շարժունության ծրագրով ուսուցման ընդունելու վերաբերյալ, որը պետք է ներառի հետևյալ կետերը.

- 1) ակադեմիական շարժունության ժամկետները,
- 2) ուսման վճարի և կրթաթոշակների վճարման պայմանները ակադեմիական շարժունության ժամանակահատվածի ընթացքում՝ համաձայն սույն կարգի պահանջների,
- 3) ընդունող բուհի կրթական ծրագրով չնախատեսված, սակայն շարժունության շրջանում պարտադիր առարկաների (մոդուլների) գծով կրեդիտների լրացման կարգը, ձևը և ժամկետները,
- 4) որպես հավելված և հրամանի հիմք հանդիսացող եռակողմ համաձայնագիրը:

17. Առանձին դեպքերում, եթե կողմերը կրթական ծրագրում կատարում են փոփոխություններ, Ակադեմիայի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման միջոցով (ուսումնամեթոդական վարչություն/ասպիրանտուրայի բաժին) եռակողմ

համաձայնագրում կատարված փոփոխությունների հիման վրա լրացումներ և փոփոխություններ են կատարվում նաև հրամանում:

17.1. Ակադեմիական շարժունության ծրագրով սովորելու ընթացքում առաջացած առանձնահատուկ դեպքերը/հարցերը քննարկվում են Ակադեմիայի ռեկտորատի նիստում:

III. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

18. Ընդունող բուհում ակադեմիական շարժունության ծրագրով սովորելու ընթացքում Ակադեմիայում վճարովի հիմունքներով սովորողները ազատվում են Ակադեմիայի ուսման վարձից՝ ակադեմիական շարժունության ծրագրի արդյունքում լրացրած առարկաների կրեդիտներին համապատասխան գումարի չափով:

19. Ակադեմիայում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ սովորողի տեղը և կրթաթոշակը ակադեմիական շարժունության ժամանակահատվածում պահպանվում են՝ անկախ ակադեմիական շարժունության ծրագրի ֆինանսական պայմաններից:

20. Ակադեմիական շարժունության ժամանակահատվածում հետազոտողը պետք է վճարի իր ատենախոսության գիտական ղեկավարման համար՝ համաձայն գործող օրենսդրության և/կամ կնքված պայմանագրի դրույթների:

IV. ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

21. Ակադեմիական շարժունության ժամկետի ավարտից հետո սովորողն իր ուսումնասիրած առարկաների և պարապմունքների ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտները և գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի Ակադեմիա՝ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար:

22. Անհրաժեշտության դեպքում Ակադեմիան իրավասու է կատարելու ակադեմիական շարժունության հետևանքով առաջացած՝ սովորողի ուսումնական ժամանակացույցի ճշգրտումներ:

23. Հետազոտողի կուտակած կրեդիտների ճանաչումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և Ակադեմիայում տվյալ ուսումնական տարում հաստատված և գործող ուսումնական պլանի հիման վրա:

24. Եթե սովորողը չի կուտակել եռակողմ համաձայնագրում նշված կրեդիտները, ապա ամբիոնի վարիչի միջնորդությամբ և ուսումնամեթոդական վարչության զեկուցագրի հիման վրա տրվում է հրաման բաց թողնված կամ չկուտակած կրեդիտները լրացնելու և ժամկետների վերաբերյալ:

25. Եթե Ակադեմիայի սովորողի (բացառությամբ հետազոտողի) ակադեմիական շարժունությունն իրականացվում է ուսումնառության առաջին տարվա ընթացքում, ապա սովորողն իրավունք ունի լրացնելու կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը (լրացնել պակասող կրեդիտները) Ակադեմիայում սովորելու ամբողջ ընթացքում:

V. ՍՈՎՈՐՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

26. Սովորողի ակադեմիական տեղափոխությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի ռեկտոր

Ա. Լոքյան